

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 մայիսի 2013 թ.

N 316-Ա

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ  
ՖՈՆԴՈՒՄ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ  
ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունվարի 11-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1-Ն որոշման 17-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է**:

Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անտառային ֆոնդում անտառային միջոցառումների 2013 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## **ԾՐԱԳԻՐ**

### **ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՖՈՆԴՈՒՄ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ**

#### **1. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ**

Պետական անտառային ֆոնդում անտառային միջոցառումների ծրագրի նպատակն է պետական անտառային ֆոնդի տարածքներում, ընտրելով առանձին զանգվածներ և իրականացնելով անտառի բնական վերականգնման օժանդակման միջոցառումներ, ստեղծել բարենպաստ պայմաններ սերմերի ծլման, աճի և զարգացման համար, որոնք ուղղված կլինեն անտառի սերմային բնական վերականգնմանը: Սերմերով բնական վերականգնման հաջողությունը անտառում պայմանավորված է ինչպես սերմերի քանակով, որակով, այնպես էլ նրանց ծլման և հետագա աճի պայմաններով: Առատ պտղաբերման տարիներին հանրապետության պետական անտառային ֆոնդի հիմնական անտառ կազմող տեսակները (կաղնին, հաճարենին, բոխին) իրենց տարածված արեալում 1 հա-ի վրա կարող են տալ կաղնին – 500 հազ. սերմ, հաճարենին – 40 մլն. սերմ և բոխին – 50 մլն. սերմ:

Ծրագրով նախատեսվում է պետական անտառային ֆոնդում անտառակուլտուրային (անտառամշակութային) գծով անտառի վերականգնման միջոցառումների իրականացում, ինչպես նաև ոչ անտառաձածկ տարածքներում, նոսրուտներում, բացատներում, անբավարար վերականգնված հատատեղերում՝ ծառատնկման աշխատանքներ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է անտառաշինական նախագծի մշակման աշխատանքների իրականացում:

#### **2. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

Ծրագրի իրականացումը կապահովի անտառների էկոլոգիական, միջավայրաստեղծ, հողապաշտպան, ջրակուտակիչ, սանիտարահիգիենիկ և առողջապահական դերը: Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա անտառում խնամքի աշխատանքների շնորհիվ տարեկան ստանալ ավելի քան 300 (երեք հարյուր) հազար որակյալ հիմնական անտառակազմող (հացենու, լորենու, կաղնու, թխկենու, հաճարենու և բոխենու) տեսակի տնկիներ:

Ծրագրի շրջանակներում կհիմնվի 15 հա նոր անտառ:

Անտառային տնտեսության վարման նպատակով ծրագրի շրջանակներում կիրականացվի անտառաշինական նախագծի մշակման 1 փուլի աշխատանքները: Անտառաշինական նախագիծը անտառային տնտեսության վարման ընթացիկ և

հեռանկարային պլանավորման պարտադիր տեխնիկական փաստաթուղթ է, որը տալիս է անցած ժամանակաշրջանի համար անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման ամբողջական գնահատականը, ինչպես նաև անտառային տնտեսության վարման առաջիկա 10 տարիներին իրականացվելիք միջոցառումները:

Անտառաշինական նախագծի մշակման I փուլում նախատեսվում է տաքսացիոն աշխատանքների իրականացում 1200 հեկտար անտառտարածքի վրա:

Աշնանային ժամանակաշրջանում ընտրված անտառային զանգվածներում հիմնականում կկիրառվեն կոպիտ թաղիքի և հողի փխրեցում, ենթանտառի նոսրացում, անհրաժեշտության դեպքում հիմնական ծառատեսակների սերմերի օժանդակ տունկ: Նշված միջոցառումների շնորհիվ որոշ չափով կբացառվեն անտառում հողի երեսին ընկած սերմերի չորացումն ու ցրտահարումը, վնասումը միջատների և հիվանդությունների կողմից:

### **3. ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անտառային ֆոնդում անտառային միջոցառումների իրականացման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեից բնափայտի բնական աճի ապահովման միջոցառումների համար կհատկացվի 4800.0 հազ. դրամ, անտառատնկման միջոցառումների համար՝ 8 000.0 հազ. դրամ, անտառաշինական նախագծի մշակման համար՝ 3000.0 հազ. դրամ:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ**

**Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**